



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 656 -Ա

28 հոկտեմբերի 2024 թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ
ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱԶՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N 1498-Ա որոշման 3-րդ, 4-րդ կետերի և 5-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները՝ **որոշում եմ.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության և « Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միաձուլման պայմանագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Զանիկ Բազեյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

28.10.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503



ՄԱՐԶՊԵՏ՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024թ. հոկտեմբերի 28-ի
N 656-Ս որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

/կազմված է 25.10.2024թ. և բազկացած է 4 թերթից/

«ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Մեծ Մասրիկ

25.10.2024թ.

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն Ատոմ Հակոբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ ի դեմս տնօրեն Նազիկ Հովհաննիսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքում են սույն Միաձուլման պայմանագիրը առ այն, որ

1. Պայմանագրի կողմերը.

1.1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.00300, ՀՎՀՀ 08802871, գտնվելու վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Մեծ Մասրիկ, փ.8, N 1):

1.2 «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.00292, ՀՎՀՀ 08802778, գտնվելու վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Մեծ Մասրիկ, 4 փ., 5 նրբ., N 1):

2. Պայմանագիրը կնքվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու մասին N 1498-Ա որոշման:
3. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպվում են միաձուլման ձևով՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:
4. Միաձուլման միջոցով վերակազմակերպման կարգը.
Միաձուլման ճանապարհով վերակազմակերպված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության դադարման պետական գրանցումից հետո 10-օրյա ժամկետում միաձուլվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից կազմված և կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող պետական կառավարման լիազոր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ հաստատված փոխանցման ակտերի համաձայն՝ մինչև գործունեության դադարման պետական գրանցման ավարտը «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանձնում են, իսկ միաձուլման արդյունքում ստեղծված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ընդունում է միաձուլվող կազմակերպությունների առկա հիմնական (օգտագործման իրավունքով պատկանող) և շրջանառու միջոցները, այլ գույքը, դրամական միջոցները, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները: Հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2024թ. հոկտեմբերի 22-ի N 633-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանձնում-ընդունումը կատարվում է համապատասխան ակտերի միջոցով, որոնք ստորագրվում է կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա է հաստատման Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ:

- «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպված են համարվում նոր ստեղծված իրավաբանական անձի պետական գրանցման պահից, իսկ վերակազմակերպումը կատարված է համարվում գրանցամատյաններում վերակազմակերպությունների վերաբերյալ համապատասխան գրառումներ կատարելու պահից:
5. Սույն պայմանագրի կողմերը պարտավորվում են իրականացնել միաձուլման գործընթացի հետ կապված հետևյալ գործողությունները.
- սույն պայմանագրի ստորագրման պահից հետո եռօրյա ժամկետում կազմակերպությունների վերակազմակերպման մասին սահմանված կարգով տեղեկացնել բոլոր պարտատերերին,
 - սույն պայմանագրի ստորագրման պահից հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել
1) պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման պայմանագիրը,
2) պետական ոչ առևտրային կազմակերպությունների գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերվող բոլոր (ներառյալ վիճարկվող) պարտավորությունների փոխանցման ակտերը,
6. Սույն պայմանագրի ստորագրումից հետո կողմերն իրավունք չունեն կատարել գույքի օտարման գործարքներ՝ առանց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի գրավոր համաձայնության:
7. Վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծված՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության շահույթը (պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության չափը) տնօրինվում է նրա կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանց հաշվի առնելու շահույթի ստացման (վնասների գոյացման, պարտավորությունների առաջացման) աղբյուրները և ժամկետները:
8. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը պատասխանատվություն է կրում միաձուլվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների պարտավորությունների համար:
9. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդը:

10. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի կողմից հաստատվելուց հետո:

«ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մեծ Մասրիկ գյուղի միջնակարգ
դպրոց» ՊՈԱԿ կողմից՝

Տնօրեն՝



Ա. Հակոբյան

«ՀՀ Գեղարքունիքի մարզի
Մեծ Մասրիկ գյուղի տարրական
դպրոց» ՊՈԱԿ կողմից՝

Տնօրեն՝



Ն. Հովհաննիսյան